ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

ՀՀ/Ելից 72/165-26 «29» մայիսի 2026թ.

«Մաքս Շին» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Պետրոսյանին
(ՀՀ, Երևան-Էջմիածին խճուղի, 12 շենք
ՀՎՀՀ՝ 04436799
էլ. հասցե՝ Maxshin2021mail.ru)

Ծանուցում

պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

2026 թվականի ապրիլի 22-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Մաքս Շին» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված **ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-4 ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 2026 թվականի մայիսի 6-ին Մատակարարին ներկայացվել է համաձայնագրի նախագիծը և առաջարկվել տաս աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել և ներկայացնել Պատվիրատուին:**

«Մաքս Շին» ՍՊԸ -ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված համաձայնագրի նախագծի օրինակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը միակողմանի լուծում է Պայմանագիրը **357600 (երեք հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ** գումարի չափով՝

Չափաբաժին	Անվանում	չափման միավորը	Քանակը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ
10	Անվավոր խոտհնձիչ 48սմ	հատ	10	254400
12	Սղոց սկավառակով (փոքր)	հատ	10	103200

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏԵՍՈՒՆ՝ ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆ

Կատարող՝ Ն. Ավագյան
Հեռ.՝ 011-514-745